# «ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**ՆԱԽԱԳԻԾ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՕՐԵՆՔԸ**

**«ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 1.** «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության 2014 թվականի դեկտեմբերի 17-ի ՀՕ-231-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի «լիազորած պետական կառավարման մարմնի և գործադիր իշխանության տարածքային կառավարման մարմնի ստորաբաժանումներ» բառերը փոխարինել «լիազորած պետական մարմնի և պետական մարմնի տարածքային ստորաբաժանումներ»:

**Հոդված 2.** Օրենքի 22-րդ հոդվածի վերնագրի «պետական կառավարման մարմնի» բառերը փոխարինել «պետական մարմնի» բառերով, իսկ 1-ին մասի «պետական կառավարման մարմինը» բառերը՝ «պետական մարմինը» բառերով:

**Հոդված 3.** Օրենքի 36.2-րդ հոդվածի 3-րդ մասի «պետական կառավարման մարմնի» բառերը փոխարինել «պետական մարմնի» բառերով:

**Հոդված 4.** Օրենքի 40-րդ հոդվածի 8-րդ մասի «Պետական կառավարման» բառերը փոխարինել «Պետական մարմինները» բառերով:

**Հոդված 5.** Օրենքի 42-րդ հոդվածի 4-րդ մասի «Պետական կառավարման» բառերը փոխարինել «Պետական մարմինները» բառերով:

**Հոդված 6.** Օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ, 11-րդ, 13-րդ կետերի, 25-րդ հոդվածի 6-9-րդ, 11-րդ մասերի, 26-րդ հոդվածի 2-րդ մասի, 30-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերի, 31-րդ հոդվածի 1-ին մասի, 35-րդ հոդվածի 2-րդ մասի, 36.1-ին հոդվածի 1-ին և 3-րդ մասերի, 32.2-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի 2-րդ մասի, 40-րդ հոդվածի վերնագրի, 1-ին, 2-րդ և 9-րդ մասերի, 41-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետի և 46-րդ հոդվածի 6-րդ մասի

«պետական մարմնի աշխատակազմում» բառերը փոխարինել «պետական մարմնում» բառերով:

**Հոդված 7.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: